ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ
1802- 1885



Ֆրանսիացի մեծանուն բանաստեղծ, արձակագիր ու դրամատուրգ **Վիկտոր Հյուգոն** ֆրանսիական դեմոկրատական ռոմանտիզմի առաջնորդն ու տեսաբանն է: Նա նշանակալի տեղ է զբաղեցնում XIX դարի ֆրանսիական գրականության պատմության մեջ իր բազմաժանր ստեղծագործություններով: Վիկտոր Հյուգոն նաև հայտնի քաղաքական գործիչ և մտավորական է, որը մեծ դեր է կատարել XIX դարի պատմության մեջ:

Ի թիվս այլ ստեղծագործությունների՝ Հյուգոն գրել է ինը վեպ: Առաջին վեպը գրել է տասնվեց տարեկանում, վերջինը՝ *«Իննսուներեքը»*, ութսուներկու տարեկանում: Հյուգոյի առաջին նշանակալից վեպը եղավ 1831թ.տպագրված *«Փարիզի Աստվածամոր տաճարը»* (ֆր.՝ Notre-Dame de Paris) վեպը, որը վերակենդանացնում է 15-րդ դարի Փարիզի կյանքը:

Ուշագրավ է վեպի ստեղծման պատմությունը: Ըստ հրատարակչի հետ կնքած պայմանագրի՝ Հյուգոն պարտավորվում էր ստեղծագործությունն ավարտին հասցնել հինգ ամսում: Բազմաթիվ «ծանրակշիռ» հանգամանքներ, սակայն, խանգարում էին հեղինակին ժամանակին ձեռնամուխ լինելու վեպի ստեղծման աշխատանքներին. նա սիրում էր զբոսնել Փարիզում, մասնակցել հանդիպումների, այցելել թատրոններ: Իսկ երբ վերջապես գործի անցավ ու դեռ նոր էր հասել 6-րդ էջին, երկրում սկսվեց հեղափոխություն: Հյուգոն ստիպված էր լքել իր տունը. կռիվն ու բախումները տեղի էին ունենում տան մոտակայքում: Հապճեպ տեղափոխման ժամանակ նա կորցրեց նախնական նշումներով տետրը, իսկ հրատարակիչն արդեն տվել էր ժամկետի հետաձգման վերջին հնարավորությունը, և վեպը գրելու և առավել ևս ավարտին հասցնելու ժամանակ համարյա չէր մնում: Գրողի կինը՝ Ադելը, վեպի շուրջ ամուսնու աշխատաոճի մասին պատմում է հետևյալը. *«...Այժմ հեղաձգման վրա հույս դնել չէր կարելի, անհրաժեշտ էր հասցնել ժամանակին: Նա գնեց թանաքով մի շիշ և մոխրագույն բրդից մեծ սվիտեր և «մտավ» վեպ, ինչպես բանտ: Նա տխուր էր: Այսուհետև նա լքում էր իր*

գրասենյակը միայն ուտելու և քնելու համար: Նա ամբողջովին ստեղծագործության իշխանության տակ էր ու չէր զգում ո՛չ հոգնածություն, ո՛չ ծմեռային ցուրտը. դեկտեմբերին նա աշխատում էր պատուհանները բաց: Հունվարի 14-ին գիրքն ավարտված էր: Թանաքով լի մի շիշը, որը Հյուգոն գնել էր աշխատանքն սկսելու առաջին օրը, դատարկված էր, նա հասել էր վերջին տողին և վերջին կաթիլին, անգամ մտածում էր գիրքը վերանվանել և վերնագրել՝ «Ինչ է պարունակում մի շիշ թանաքը»»:

Մեկ տարվա ընթացքում գիրքը բազմիցս վերահրատարակվում է: Այնքան մեծ է լինում գրքի հաջողությունը, որ այն նաև դառնում է միջնադարյան տաճարի փրկության գրավականը. քաղաքային իշխանությունները պատրաստվում էին քանդել Փարիզի Աստվածամոր տաճարը, որն այն ժամանակ շատ վատ վիճակում էր: Հյուգոն գիտեր այդ և իր գրքի միջոցով, որն առաջին հայացքից միայն սիրո մասին ողբերգական պատմություն է թվում, հանրային ուշադրությունը կենտրոնացրեց տաճարի վրա, և դա նրան հաջողվեց. հանրությունը պահանջեց վերանորոգել տաճարը: Ստեղծագործությունը նպաստեց, որ աշխարհում ընդհանրապես մեծանա ուշադրությունը պատմական հուշարձանների պահպանման ու վերականգնման նկատմամբ: Դրա վառ վկայությունն է այն, որ Աստվածամոր տաճարը, անկախ ամեն ինչից, մինչ այսօր էլ կանգուն է: Այն դարձել է Փարիզի այցեքարտը և աշխարհի տարբեր կողմերից ժամանած զբոսաշրջիկներին մոգական մի զորությամբ ձգում է իր կողմը:

Վեպում ընթերցողին կլանում են միջնադարի ֆրանսիական հասարակության տարբեր շերտերի, նրանց փոխհարաբերությունների գրավիչ նկարագրությունը, հետաքրքիր դիպաշարը: Գունեղ ու տպավորիչ են ներկայացված հերոսներն իրենց բարդ հարաբերություններով, հույզերով, ապրումներով ու ողբերգական ճակատագրերով: Այս ամենի շնորհիվ վեպը նաև հայտնի ռեժիսորների, երգահանների և այլ արվեստագետների ուշադրությունն է գրավել. վեպի հիման վրա ստեղծվել են գեղարվեստական ֆիլմեր, թատերական և երաժշտական բեմականացումներ:

«Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպի մասին 19-րդ դարի ֆրանսիացի պատմաբան և հրապարակախոս *Միշլեն* ասել է. *«Վիկտոր Հյուգոն հին տաճարի կողքին կառուցեց բանաստեղծական մի նոր տաճար, նույնպիսի պինդ ու ամուր հիմքով և նունպիսի բարձր աշտարակներով»:*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Կարդա՛ *«Փարիզի Աստվածամոր տաճարը»* վեպը, այնուհետև համացանցից գտի՛ր ու դիտի՛ր ֆիլմը՝ նկարահանված վեպի մոտիվներով:
2. Դիտի՛ր և ունկնդրի՛ր վեպի մոտիվներով ստեղծված մյուզիքլը՝ ֆրանսիացի հայտնի երգիչների կատարմամբ:
3. Ներկայացրու դիպաշարն ու բովանդակությունը:
4. Վերլուծի՛ր կերպարները:
5. Բնութագրի՛ր Կվազիմոդոյին, դիրքորոշում ներկայացրու նրա արարքի վերաբերյալ:

6. Կարծիք հայտնիր, թե հերոսներից ում ես համակրում: Հիմնավորիր խոսքդ համապատասխան օրինակներով:
7. Նկարագրիր Էմերալդային՝ օգտվելով հեղինակային բառապաշարից:

Քննարկում

Դասընկերներիդ հետ քննարկո՛ւմ կազմակերպիր *«Արարչագործ և կործանարար սերը»* թեմայի շուրջ: Քննարկման ընթացքում կարծիքդ հիմնավորի՛ր գրականությունից բերված դիպուկ օրինակներով: